ԲԱԺԻՆ 5.

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ[1]

Ներածություն

Սույն գլխում ներկայացված է ԳՀՀ-ի իրականացման Ազգային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության եվրաինտեգրման համակարգում ընդգրկված կառույցների աշխատանքների դասակարգումը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխումը:

Ազգային ծրագրով նախատեսված օրենսդրության և քաղաքականության համապատասխանեցման միջոցառումները, որոնք կիրականացվեն 2006-2009 թվականներին, ենթադրում են ընդհանուր առմամբ 508 նորմատիվ իրավական ակտերի ընդունում. մասնավորապես, 67 նորմատիվ իրավական ակտեր կընդունվեն 2006 թվականին (13.2%), 219 ակտեր՝ 2007 թվականին[2] (43.1%), 144 իրավական փաստաթղթեր՝ 2008 թվականին (28.3%), իսկ մնացած 78 ակտերը (15.4%)՝ Ազգային ծրագրի իրականացման վերջում՝ 2009 թվականին[3]: Նշված 508 նորմատիվ իրավական ակտերից կընդունվեն թվով 237 ՀՀ օրենքներ, որոնցից 69-ը նոր ակտեր են, իսկ 168 ՀՀ օրենքներ ենթակա են փոփոխության և լրացումների: Այս համատեքստում ընդունման ենթակա են նաև ՀՀ կառավարության թվով 189 որոշումներ, որոնք բաշխված են հետևյալ կերպ. ՀՀ կառավարության 162 նոր որոշումներ, իսկ 27 գործող ակտերում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ: Պետական գերատեսչական մարմինների կողմից ընդունման ենթակա 51 ակտերից 39-ը նոր ակտեր են, իսկ 12-ում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ:

Հիշյալ 508 նորմատիվ իրավական ակտերից 96-ը (18.9%) բաժին են ընկնում շրջակա միջավայրի բնագավառին, 50-ը (9.8%)՝ ապրանքների ազատ տեղաշարժի ոլորտին, 42-ը (8.3%)՝ տրանսպորտային քաղաքականությանը, 37-ը (7.3%)՝ ընկերությունների իրավունքի բնագավառին, 34-ը (6.7%)՝ սպառողների պաշտպանության բնագավառին, 31-ը (5.8%)՝ արդարադատություն և ներքին գործերին, 30-ը (5.9%)՝ ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի բնագավառին, 29-ը (5.7%)՝ գյուղատնտեսությանը, 29-ը (5.7%)՝ սոցիալական քաղաքականությանը և զբաղվածությանը: Ընդհանուր առմամբ, Ազգային ծրագրի 11 գլուխներում կենտրոնացած է ընդունման ենթակա ակտերի 80.3%-ը:

Սակայն իրականացվելիք աշխատանքի ծավալների տեսանկյունից հիմնական ցուցանիշը մարդ/օրերի բաշխվածությունն է, որի վերլուծությունը ներկայացված է ստորև:

ՀՀ եվրաինտեգրման կառավարման իրավական համակարգի ներդրում

Ազգային ծրագրի իրականացման տեսանկյունից գործող, ինչպես նաև ստեղծվելիք կառույցների և ինստիտուտների գործունեության կանոնակարգման համար 2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում կընդունվեն թվով 22 նորմատիվ իրավական ակտեր[4]: Ընդ որում, նշված քանակի կեսից ավելին՝ 14 ակտ (63.6%), ՀՀ կառավարության նոր որոշումներ են, որոնք հիմնականում վերաբերում են ԵՄ ինտեգրման գործընթացի կազմակերպմանը և կառավարմանը, ինչպես նաև համապատասխան կառույցների ստեղծմանը, դրանց աշխատանքների կանոնակարգմանը և միմյանց միջև փոխհամագործակցության համակարգմանը: Հայաստանի Հանրապետության 2 օրենքներում (9.1%) կկատարվեն փոփոխություններ և լրացումներ, որոնք հստակեցնում են խնդրո առարկայի համատեքստում իրավական ակտերի ընդունման գործընթացը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեությունը: ՀՀ Նախագահի 2 հրամանագրերում (9.1%) կկատարվեն փոփոխություններ և լրացումներ՝ կապված ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունների հետ: ՀՀ Նախագահը կարձակի 2 նոր հրամանագրեր (4.5%), որոնք առնչվում են ԵՄ ինտեգրման բանակցային գործընթացին և

---

[1] Ներկայացված ռեսուրսները նախատեսված են միայն Ազգային ծրագրի իրականացման համար, դրանց մեջ ներառված չեն այն ռեսուրսները, որոնք ուղղած են լինելու տնտեսության ոլորտներում տարբեր կառույցների ստեղծմանը, որոնք իրենց բնույթով Ազգային ծրագրի իրականացման արդյունք են:

[2] Անհրաժեշտ է նշել, որ 2007 թվականին կմշակվի Ազգային ծրագրի նոր նախագիծը, որը հաշվի կառնի կատարված աշխատանքների ծավալը և անցած ժամանակահատվածում ԵՄ օրենսդրությունում կատարված փոփոխությունները և լրացումները:

[3] Տե՛ս հավելվածներ 1-ա, 1-բ: Այստեղ պետք է նշել, որ նոր ընդունվելիք իրավական ակտերի ցանկում գոյություն ունեն այնպիսի ակտեր, որոնց իրավական կարգավիճակը (օրենք, կառավարության որոշում, կամ գերատեսչական նորմատիվ ակտ) , դեռ հստակորեն որոշված չէ

[4] Տե՛ս հավելված 2-ա:

ստացվելիք ֆինանսական օժանդակության կանոնակարգմանը[5]: Նշված ժամանակահատվածում ՀՀ վարչապետի կողմից կընդունվի 1 նոր որոշում (4.5%), ինչպես նաև կընդունվեն 2 այլ նորմատիվ իրավական ակտեր (9.1%): Այստեղ պետք է նաև նշել, որ վերոհիշյալ 22 նորմատիվ իրավական ակտերի մշակման և հաստատման ներկայացման պատասխանատու մարմիններն են ՀՀ կառավարության աշխատակազմը (12 ակտ), ՀՀ արդարադատության նախարարությունը (4 ակտ), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (3 ակտ), ՀՀ արտաքին գործերի նախարարությունը (1 ակտ)[6] և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը (2 ակտ):

2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ընդունման, փոփոխությունների և լրացումների ենթակա նորմատիվ իրավական ակտերի մշակման համար նախատեսված է 545 մարդ/օր[7], որից 308-ը (56.5%) բաժին է ընկնում ՀՀ կառավարության աշխատակազմին, 90-ը (16.5%)՝ ՀՀ արդարադատության նախարարությանը, 65-ը (11.9%)՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, 55-ը (10.1%)՝ ՀՀ քաղաքացիական ծառայության պետական խորհրդին, 27-ը (4.9%)՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչություն

ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության 2006-2009 թվականների աշխատանքի ծանրաբեռնվածությունը կկազմի 11880 մարդ/օր: Ընդ որում, 2006 թվականին բաժին է ընկնում ընդհանուր ծավալի 16.7%-ը՝ 1980 մարդ/օր, 2007 և 2008 թվականներին համապատասխանաբար՝ 33.3%-ը, որը յուրաքանչյուր տարվա համար կազմում է 3960 մարդ/օր և 2009 թվականին՝ 1980 մարդ/օր, որը կազմում է ընդհանուր ծավալի 16.7%-ը[8]:

ԵՄ ինտեգրացման և գործառութային ստորաբաժանումներ

Ազգային ծրագրի իրականացման կարևորագույն օղակներից են ԵՄ ինտեգրման և պետական գերատեսչությունների գործառութային ստորաբաժանումները, որոնք համատեղ կիրականացնեն Ազգային ծրագրով նախատեսված աշխատանքները: Այդ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ 23973 մարդ/օրերը[9] ձևավորվել են՝ հիմք ընդունելով հետևյալ սկզբունքները.

- այն դեպքում, երբ միջոցառման իրականացման համար պատասխանատու են մի քանի պետական կառավարման մարմիններ, նախատեսված մարդ/օրերը նրանց միջև բաշխվում են հետևյալ կերպ՝ պատասխանատու և աջակցող մարմիններին՝ համապատասխանաբար 60 և 40 տոկոս.
- ԵՄ ինտեգրման և գործառութային ստորաբաժանումների միջև միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ մարդ/օրերը բաշխման համամասնությունները հետևյալն են՝ պատասխանատու մարմնի համար՝ համապատասխանաբար 30 և 70 տոկոս, աջակցող մարմնի դեպքում՝ 20 և 80 տոկոս[10]:

Ազգային ծրագրի աշխատանքների իրականացման համար նախատեսված 23973 մարդ/օրերը բաշխված են հետևյալ կերպ. 2006 թվականին աշխատանքի ծավալը կազմում է 3076 մարդ/օր (12.8%), 2007 թվականի համար՝ 9235 մարդ/օր (38.6%), 2008 թվականին կօգտագործվի 6828 մարդ/օր (28.5%) և 2009 թվականին կծախսվի նախատեսված մարդ/օրերի 20.2%-ը, ինչը կազմում է 4834 մարդ/օր[11]:

Աշխատանքի ծանրաբեռնվածության վերլուծությունն, ըստ պետական կառավարման մարմինների, ցույց է տալիս, որ աշխատանքների հիմնական ծավալը՝ 15.5%-ը (3717 մարդ/օր),

---

[5] ՀՀ արտաքին գործերի նախարարության ԵՄ բաժինը կհամալրվի նոր աշխատակիցներով: ԵՄ-ի հետ բանակցային գործընթացը կազմակերպելու նպատակով ԵՄ-ում ՀՀ պատվիրակությունը կընդլայնվի համապատասխան փորձագետներով:

[6] Այստեղ պետք է նշել, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ կառավարության աշխատակազմը համատեղ կմշակեն ՀՀ կառավարության նոր որոշման նախագիծ:

[7] Տե՛ս հավելված 2-բ:

[8] ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչությունում 2006 թվականին (երկրորդ եռամսյակից սկսած) ընդգրկված կլինեն 10 աշխատակիցներ, իսկ 2007-2009թթ.՝ 15 աշխատակից: Որպես աշխատանքի ծանրաբեռնվածության չափանիշ՝ վերցված է ամսական 22 աշխատանքային օր ցուցանիշը:

[9] Տե՛ս հավելված 3-ա:

[10] Տե՛ս հավելված 3-բ, 3-գ:

[11] Այստեղ նույնպես պետք է նշել, որ 2007 թվականին կմշակվի Ազգային ծրագրի նոր նախագիծը, որը հաշվի կառնի կատարված աշխատանքների ծավալը և անցած ժամանակահատվածում ԵՄ օրենսդրությունում կատարված փոփոխությունները և լրացումները:

բաժին է ընկնում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը, 14.7%-ը (3534 մարդ/օր)՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, 11.5%-ը (2752 մարդ/օր)՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը, 8.6%-ը (2055 մարդ/օր)՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, իսկ 6.5% (1563 մարդ/օր)՝ ՀՀ առողջապահության նախարարությանը:[12] Ընդհանուր առմամբ, աշխատանքների ծավալի 68.9%-ն ընկնում է պետական կառավարման 7 մարմինների վրա:

Ազգային ծրագրի իրականացման աշխատանքները կընթանան երկու ուղղություններով՝ օրենսդրական և քաղաքականության համապատասխանեցում:[13]

Ընդունման ենթակա ակտերի քանակի և աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մարդ/օրերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ակտերի քանակը չի ներկայացնում կատարվելիք աշխատանքների իրական ծավալը, որը բացատրվում է հետևյալով.

- ԵՄ և ՀՀ իրավական ակտերի համեմատական վերլուծությունից ի հայտ եկած ՀՀ ակտերում ԵՄ ակտերի դրույթների առկայությամբ.
- ԵՄ ակտերի դրույթների և ՀՀ առկա իրավական նորմերի համապատասխանության աստիճանով.
- ԵՄ իրավական ակտում նորմերի քանակով, որի հիման վրա ընդունվում է ՀՀ նորմատիվ իրավական ակտը:

Ազգային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացման համար ծրագրավորած 23973 մարդ/օրերը բաշխված են ըստ Ազգային ծրագրի գլուխների, պետական կառավարման մարմինների, դրանց գործառութային և ԵՄ ինտեգրման առկա կամ նոր ստեղծվելիք ստորաբաժանումների: Ելնելով մարդ/օրերի քանակից՝ պետական մարմիններում կստեղծվեն ԵՄ ինտեգրման վարչություններ և բաժիններ, իսկ որոշ մարմիններում կնշանակվեն ԵՄ ինտեգրման պատասխանատու աշխատակիցներ: Մասնավորապես՝

- 1000 մարդ/օր և ավելի դեպքում կստեղծվեն ԵՄ ինտեգրման և միջազգային կազմակերպությունների վարչություններ.
- 100 -1000 մարդ/օր դեպքում կստեղծվեն ԵՄ բաժիններ.
- մինչև 100 մարդ/օր պարագայում կնշանակվեն պատասխանատու աշխատակիցներ:

Հաշվի առնելով Ազգային ծրագրի աշխատանքների հաջորդականությունը՝ պետական կառավարման մարմիններում ԵՄ ինտեգրման ստորաբաժանումները կստեղծվեն 2006 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում:

Թարգմանչական կենտրոն

Ազգային ծրագրի շրջանակներում ստեղծվելիք Թարգմանչական կենտրոնի կողմից 2006-2009 թվականներին նախատեսվում է թարգմանել 11746 էջ կազմող ԵՄ օրենսդրական ակտեր[14]:

Ընդ որում, 2006 թվականին կթարգմանվի 2935 էջ պարունակող ԵՄ իրավական ակտ, 2007 թվականին՝ 4242 էջ, 2008 թվականին՝ 3202, իսկ 2009 թվականին՝ 1367 էջ, որոնք ընդհանուր ծավալի մեջ համապատասխանաբար կազմում են 25.0, 36.1, 27.3 և 11.6 տոկոս: Միաժամանակ, ԵՄ իրավական ակտերի հետ համապատասխանեցված ՀՀ նորմատիվ իրավական ակտերի թարգմանումն անգլերենով կպահանջի լրացուցիչ ռեսուրսներ:

Թարգմանչական կենտրոնի մասնագետների ծանրաբեռնվածության հիմնական ուղղությունները, ըստ Ազգային ծրագրի գլուխների, շրջակա միջավայրի, ապրանքների ազատ տեղաշարժի, գյուղատնտեսության, տրանսպորտային քաղաքականության, մաքսային խնդիրների, վիճակագրության, ինչպես նաև ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի բնագավառներն են: Նշված ոլորտների վրա ընկնում է իրականացվելիք թարգմանչական աշխատանքների 73.8%-ը:

---

[12] Այստեղ նույնպես պետք է նշել, որ ծրագրի իրականացման շրջանակում գոյություն ունեն խնդիրներ, որոնց համար պատասխանատու մարմինները դեռևս հստակորեն որոշված չեն:
[13] Տե՛ս հավելվածներ 4-ա, 4-բ, 4-գ, 4-դ, 4-ե, 4-զ:
[14] Տե՛ս հավելվածներ 5-ա, 5-բ, 5-գ:

Հաշվի առնելով աշխատանքների առանձնահատկությունը, ըստ մասնագիտական ուղղվածությունների, և պահանջվող բարձր որակը՝ կենտրոնի աշխատակիցները կանցնեն վերապատրաստման դասընթացներ: Ելնելով թարգմանչական աշխատանքների կարևորության աստիճանից և ըստ սահմանված ժամկետների՝ թարգմանված նյութերի շարունակական ապահովման անհրաժեշտությունից՝ Թարգմանչական կենտրոնը կհիմնադրվի 2006 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում:

Տեղեկատվական կենտրոն

Տեղեկատվական կենտրոնի աշխատանքների իրականացման համար դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր առմամբ նախատեսվում է 3498 մարդ/օր: Ըստ տարիների՝ բաշխվածությունը հետևյալն է. 2006 թվականին կծախսվի 198 մարդ/օր (5.7%), 2007 և 2008 թվականներին ռեսուրսները հավասարապես են բաշխվել՝ կազմելով համապատասխանաբար 1320 մարդ/օր (ընդամենը 75.5%), և 2009 թվականին կպահանջվի 660 մարդ/օր (18.8%)[15]: Տեղեկատվական կենտրոնը նախատեսվում է ստեղծել 2006 թվականի 4-րդ եռամսյակում:

Վերապատրաստում

ԵՄ ինտեգրման աշխատանքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է պետական գերատեսչական մարմինների աշխատակիցների համար կազմակերպել համապատասխան մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնց իրականացման համար դիտարկվող ժամանակահատվածում նախատեսվում է 1485 օր[16]: Ընդ որում, պատասխանատու մարմինների աշխատակիցների վերապատրաստման համար կտրամադրվի 1170 օր (78.8%), իսկ աջակցող մարմինների աշխատակիցներին՝ 315 օր (21.2%):[17] Վերապատրաստման գործընթացը, ըստ Ազգային ծրագրի աշխատանքների ժամանակացույցի, կսկսեն 2006 թվականի երրորդ եռամսյակում: Թարգմանչական կենտրոնի աշխատակիցները նույնպես ներգրավված կլինեն վերապատրաստման գործընթացում և կվերապատրաստվեն 2006 թվականի երկրորդ եռամսյակում:

Տեխնիկական օժանդակությունը

Ազգային ծրագրի իրականացումը կպահանջի զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնց մի մասը ՀՀ կառավարությունն ակնկալում է ստանալ ԵՄ համապատասխան կառույցներից և միջազգային այլ դոնոր կազմակերպություններից: ԵՄ կողմից տրամադրվելիք տեխնիկական օժանդակությունը կտարանջատվի 2 փուլի. առաջինը մինչև 2006 թվականի վերջը կտրամադրվի ԵՄ TACIS ծրագրի շրջանակներում (տնտեսական քաղաքականություն և իրավական խորհրդատվություն կոմպոնենտ), իսկ 2007 թվականից սկսած՝ տեխնիկական օժանդակությունը կտրամադրվի «Եվրոպայի նոր հարևաններ» քաղաքականության ֆինանսական աջակցության գործիքների միջոցով:

Նախատեսվում է, որ TACIS-ի շրջանակներում օժանդակությունը կտրամադրվի խորհրդատվության, փորձաքննության և վերապատրաստման տեսքով:

Իրենց հերթին խորհրդատվությունը կտրամադրվի օրենսդրական համապատասխանեցման ժամանակ, Ազգային ծրագրի իրականացման դիտանցման ընթացքում, քաղաքականությունը մշակելիս: Փորձաքննությունը ենթադրում է իրավական ակտերի և քաղաքականության մշակման ընթացքում դրանց վերաբերյալ տրվող մասնագիտական եզրակացությունները: Վերապատրաստման գործում ակնկալվում է, որ տրամադրվելիք օժանդակությունը կուղղորդվի ընդհանուր, թարգմանիչների, հասարակական կապերի գծով մասնագետների մասնագիտական վերապատրաստմանը:

---

[15] Տեղեկատվական կենտրոնում 2006 թվականին ընդգրկված կլինեն 3 աշխատակիցներ, իսկ 2007-2009թթ.՝ 5 աշխատակիցներ: Որպես աշխատանքի ծանրաբեռնվածության չափանիշ՝ վերցված է ամսական 22 աշխատանքային օր ցուցանիշը:

[16] Տե՛ս հավելվածներ 6-ա, 6-բ: Իհարկե, եթե հաշվի առնենք, որ վերապատրաստման ժամանակ մասնակիցների քանակը կլինի միջինում 15 հոգի, ապա կստանանք վերապատրաստման համար անհրաժեշտ մարդ/օրերի ցուցանիշը, որը կկազմի 21945 մարդ/օր:

[17] Պատասխանատու մարմին է համարվում պետական կառավարման այն մարմինը, որն իրականացնում և համակարգում է Ազգային ծրագրով սահմանված ժամկետներում օրենսդրական ակտերի մշակման, քննարկման և համապատասխան մարմիններին ներկայացման գործընթացը:
Աջակցող մարմինը այն մարմինն է, որն օժանդակում է պատասխանատու մարմնին Ազգային ծրագրով սահմանված ժամկետներում օրենսդրական ակտերի մշակման, քննարկման և համապատասխան մարմիններին ներկայացման գործընթացի ժամանակ:

Բացի վերոնշյալ ուղղություններից, ակնկալվում է, որ տեխնիկական օժանդակությունը կնպատակաուղղվի նաև տեխնիկական վերազինմանը, հատուկ ծրագրերի իրականացմանը, հասարակության հետ կապերի կազմակերպման և կանոնակարգման խնդիրների լուծմանը, ինչպես նաև Թարգմանչական կենտրոնի գործունեության աջակցմանը:

Վերոհիշյալ միջոցառումները կօժանդակվեն ԵՄ կողմից իրականացվող TWINING, TAIEX ծրագրերի, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի (EIB) միջոցով: Ազգային ծրագրի իրականացման ժամանակ, որպես տեխնիկական աջակցության հնարավոր աղբյուր, կարող են հանդես գալ նաև այլ միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցները: Դրանցից են, մասնավորապես, USAID-ն, DFID-ը, UNDP-ն, ինչպես նաև ԵՄ անդամ երկրների կողմից «երկկողմանի օժանդակության» այլ ծրագրերի շրջանակներում ուղղակի տրամադրվող օժանդակությունը:

Միևնույն ժամանակ ակնկալվում է նաև Սփյուռքից ստացվող օժանդակության ներքո ֆինանսական ռեսուրսների ներգրավումն Ազգային ծրագրի իրականացման շրջանակներում:

Նշված աղբյուրներից Ազգային ծրագրի իրականացման համար ստացվելիք տեխնիկական օժանդակության կանոնակարգման համար ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներքո կստեղծվի ԵՄ և օտարերկրյա օգնության համակարգման վարչություն, որի ստեղծման համար լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվի[18]:

Ըստ նախնական գնահատականների՝ Ազգային ծրագրի իրականացման համար 2006-2009 թվականներին ԵՄ-ից և այլ դոնոր կազմակերպություններից անհրաժեշտ կլինի ներգրավել մոտ 50 մլն եվրո գումար[19]:

Ազգային ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխվածության ամփոփ նկարագրությունը բերված է ստորև ներկայացվող աղյուսակում.

	Չափման միավոր	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	Ընդամենը
Ազգային ծրագրի նախապատրաստման փուլում նորմատիվ իրավական ակտերի ընդունում	հատ	22				22
Ազգային ծրագրի նախապատրաստման փուլում նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար անհրաժեշտ ռեսուրսներ	մարդ/օր	545				545
Նորմատիվ իրավական ակտերի ընդունում	հատ	67	219	144	78	508
Նորմատիվ իրավական ակտերի և հայեցակարգային փաստաթղթերի ընդունման համար անհրաժեշտ ռեսուրսներ	մարդ/օր	3076	9235	6828	4834	23973
ՀՀ կառավարության ԵՄ ինտեգրման վարչություն	մարդ/օր	1980	3960	3960	1980	11880
Թարգմանություններ	էջ	2935	4242	3202	1367	11746
Հասարակության հետ կապեր	մարդ/օր	198	1320	1320	660	3498
Վերապատրաստում[20]	օր	247	495	495	247	1485

[18] Վարչությունը կստեղծվի արդեն իսկ գործող ստորաբաժանումների հիման վրա:

[19] Այս գումարի մեջ ներառված են նաև Ազգային ծրագրի իրականացման արդյունքում տնտեսության տարբեր ոլորտներում անհրաժեշտ կառույցների ստեղծմանն ուղղված ֆինանսական միջոցները: Գումարի հաշվարկման համար հիմք են ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները, երկրի չափերը, ԵՄ անդամ և անդամակցող պետությունների փորձը, ինչպես նաև ԵՄ ինտեգրման գործընթացի առանձնահատկությունները:

[20] Ըստ տարիների վերապատրաստման ծանրաբեռնվածությունը բաշխվել է հաշվի առնելով յուրաքանչյուր տարում եռամսյակների տեսակարար կշիռներն ընդհանուրի մեջ: